ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՐԹՈՒԹՅԱՆ, ԳԻՏՈՒԹՅԱՆ, ՄՇԱԿՈՒՅԹԻ ԵՎ ՍՊՈՐՏԻ ՆԱԽԱՐԱՐ

ՀՐԱՄԱՆ

№ 363-Ա/2 **«12» մարտի 2024 թ.**

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՐԹՈՒԹՅԱՆ, ԳԻՏՈՒԹՅԱՆ, ՄՇԱԿՈՒՅԹԻ ԵՎ ՍՊՈՐՏԻ ՆԱԽԱՐԱՐԻ 2023 ԹՎԱԿԱՆԻ ՓԵՏՐՎԱՐԻ 24-Ի N 301-Ա/2 ՀՐԱՄԱՆՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հիմք ընդունելով «Նորմատիվ իրավական ակտերի մասին» օրենքի 33-րդ, 34-րդ հոդվածների 1-ին մասերը՝

Հ Ր Ա Մ Ա Յ Ո Ւ Մ Ե Մ

1. Հայաստանի Հանրապետության կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարի 2023 թվականի փետրվարի 24-ի՝ «Հանրակրթական ուսումնական հաստատություններում խմբակների գործունեության և ուսումնական նախագծերի իրականացման մեթոդական ուղեցույցը հաստատելու մասին» N 301-Ա/2 հրամանի՝

   1) վերնագիրը շարադրել նոր՝ հետևյալ խմբագրությամբ՝

   «Հանրակրթական ուսումնական հաստատություններում խմբակների գործունեության մեթոդական ուղեցույցը հաստատելու մասին».

   2) 1-ին կետը շարադրել նոր՝ հետևյալ խմբագրությամբ՝

   «1. Հաստատել հանրակրթական ուսումնական հաստատություններում խմբակների գործունեության մեթոդական ուղեցույցը՝ համաձայն հավելվածի:».

   2) հավելվածը շարադրել նոր խմբագրությամբ՝ համաձայն հավելվածի:

2. Սույն հրամանն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակմանը հաջորդող օրվանից:

X

ՆԱԽԱՐԱՐ՝ **Ժ. ԱՆԴՐԵԱՍՅԱՆ**

Հավելված

ՀՀ կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարի

2024 թ. _____-ի N _____Ա/2 հրամանի

Հավելված

ՀՀ կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարի

2023թ. փետրվարի 24-ի N 301-Ա/2 հրամանի

ՄԵԹՈԴԱԿԱՆ ՈՒՂԵՑՈՒՅՑ

ՀԱՆՐԱԿՐԹԱԿԱՆ ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ՀԱՍՏԱՏՈՒԹՅՈՒՆՆԵՐՈՒՄ ԽՄԲԱԿՆԵՐԻ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ

1. ԸՆԴՀԱՆՈՒՐ ԴՐՈՒՅԹՆԵՐ

1. Սույն մեթոդական ուղեցույցով կարգավորվում են հանրակրթական ծրագրեր իրականացնող ուսումնական հաստատություններում (այսուհետ՝ Հաստատություն) ուսումնական խմբակների (այսուհետ՝ Խմբակ) գործունեության հետ կապված հարաբերությունները:

2. ՀԱՍՏԱՏՈՒԹՅՈՒՆՆԵՐՈՒՄ ԽՄԲԱԿՆԵՐԻ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅՈՒՆԸ

2. Խմբակը տարիֆիկացվում է, եթե Խմբակի ծրագիրը երաշխավորվել է սույն կարգի պահանջներին համապատասխան և առնվազն 8 սովորող, իսկ մինչև 50 աշակերտ ունեցող Հաստատություններում՝ առնվազն 4 սովորող Խմբակում ընդգրկվելու ցանկություն է հայտնել՝ համաձայն ծնողի կամ օրինական ներկայացուցչի գրավոր դիմումի:

2.1. Կրթության պետական կառավարման լիազորված մարմնի որոշմամբ ստեղծված Խմբակները ձևավորվում են ըստ դասարանների.

2.2. «Առողջ ապրելակերպ» Խմբակը պարտադիր է նոր չափորոշչով ուսուցում իրականացնող 5-11-րդ դասարանների, «Մասնագիտական կողմնորոշում» Խմբակը՝ նոր չափորոշչով ուսուցում իրականացնող 8-11-րդ դասարանների սովորողների համար:

3. Խմբակի ստեղծումը, Խմբակի ղեկավարի նշանակումը և սովորողների կազմը հաստատվում են Հաստատության տնօրենի հրամանով:

4. Խմբակի ղեկավարը պատասխանատու է Խմբակի ծրագրի իրականացման համար:

5. Խմբակի ղեկավարը Խմբակի ծրագրի հիման վրա մշակում է Խմբակի թեմատիկ պլանը, որը հաստատում է Հաստատության տնօրենը:

6. Խմբակի ղեկավարը կազմում է Խմբակի մատյան, որը հաստատվում է Հաստատության տնօրենի հրամանով: Մատյանը կազմված է սովորողների հաճախումների և օրվա ուսումնական նյութի գրանցման էջերից: Մատյանում օրվա ուսումնական նյութը գրանցվում է ըստ Խմբակի թեմատիկ պլանի:

6.1 Պարտադիր Խմբակը գրանցվում է էլեկտրոնային մատյանում և ներառվում է դասացուցակում:

7. Սովորողները կարող են մասնակցել Խմբակի աշխատանքներին՝ իրենց ցանկությամբ՝ բացառությամբ սույն կարգի 2.2.-րդ ենթակետով սահմանված՝ «Առողջ ապրելակերպ» և «Մասնագիտական կողմնորոշում» պարտադիր Խմբակների:

8. Սովորողներն առանց հիմնավորման (համաձայն ծնողի կամ օրինական ներկայացուցչի գրավոր դիմումի) կարող են հրաժարվել Խմբակի աշխատանքներին մասնակցելուց, բացի Նախարարի հրամանով սահմանված Խմբակներից:

9. Հաստատության ընտրությամբ Խմբակում ընդգրկված սովորողների ուսումնառության արդյունքները գնահատվում են ձևավորող գնահատման մեթոդներով:

10. Խմբակի ղեկավարը Խմբակի ծրագրի ավարտին իրականացված աշխատանքի վերաբերյալ Հաստատության տնօրենին ներկայացնում է գրավոր հաշվետվություն, որը կցվում է Խմբակի մատյանին: Հաշվետվության մեջ ներկայացվում են մասնակիցների ձեռք բերած կարողությունները, այն վերջնարդյունքները, որոնց ձևավորմանը նպաստել է Խմբակը, առաջարկություններ ծրագրի բարելավման մասին: